

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հունիսի 4-ին (մայիս ամսվա փոխարեն) ՀՀ Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 29 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր տասներկու, աշխատանքի տեղավորման՝ տասնչորս, վարձակալությամբ տրված հողամասի, ճանապարհի վիճահարույց հարցի եւ ՀՀ քաղաքացիություն ստանալու աջակցության խնդրանքով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից տասնմեկին տրվել է դրական լուծում, մեկ դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման եւ ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են վարձակալությամբ տրված հողամասի, ճանապարհի վիճահարույց հարցի եւ ՀՀ քաղաքացիություն ստանալու աջակցության վերաբերյալ դիմումները: